



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1602



ՌՌՌՌՌՌՌՌՌ ՏՏՏՏՏՏՏ

Ա. ՏՏՏՏ



ԿԱՐՄԵՅ

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ



059
7-87

1923

ՀՈՒ ԱՐԵՎԼՈՅՍ

ՊՈՒՐԵՆ

059

Պ-Յ7

06 JUN 2009 15

ՏԱՐԵՑՈՅՑ

311-11

ԱՐԱՐԱՍ

Ա. ՏԱՐԻ

1923

ՏԱՐԻՈՅ



ԿԱԶՄԵՑ

Հ. Մ. ԳՈՏՈՒՐԵԱՆԵ



1923

Տպ. տեղ Արշարյու
ԳՈՒՔՐԷ



14224

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ոչնչապատ պայմանները եւ ժամանակի սղուծիւնը չեն թոյլատրեր որ մեր փափաքածին համաձայն կատարեալ տարեցոյց մը հրատարակէինք:

Այս պայմանները նկատողութեան առնելով կը խնդրենք որ ներողափառ ըլլան մեր ընթերցողները:

Յաջորդ տարուոյ տարեցոյցին պատրաստութեան արդէն պիտի ձեռնարկենք անմիջապէս: Որոնց որ կը գիմենք՝ տեղեկութիւններ ուզելու թող բարի ըլլան ընդփոխ պատասխանել:

Մտադիր ենք «Զատկական ալպոմ» մը հրատարակել, ուր գրական բաժինը առելի հոյս պիտի ըլլայ:

Խմբ. «Մասիս»ի

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ՏԱՐԵՅՈՅՑԻ



24423-59

03 FEB 2014



Հ. Տվար	Կ. Տվար	Օր ամս.	
1	14	ԿԻՐ	✠ Կաղանդ. 1923: Գ. օր պահոց ծննդ. ձեմ. Էվ.
2	15	Ք2	Գ. օր պահոց ծննդ.
3	16	Պ2	Ե. օր պահոց ծննդեան
4	17	Պ2	Զ. օր պահոց ծննդեան
5	18	Ե2	Ճրագարոյց ծննդ. Երեկ. նաւկախք.
	19	ՈւՐ	✠ Ծնունդ եւ Յայնսու.Թիւն Տն. մերոյ: Ճ. ամս.
7	20	2Ք	✠ Բ. օ ծննդեան: Յիշ. մեռելոց
8	21	ԿԻՐ	Գ. օր ծ նդեան
9	22	Ք2	Դ. օր ծ դեան
10	23	Պ2	Ե. օր ծննդեան
11	24	Պ2	Զ. օր ծննդեան
12	25	Ե2	Ե. օր ծննդեան
13	26	ՈւՐ	✠ Ը. Տօն Անուանակոչու. Տն.
14	27	2Ք	Ծնունդ Յովնանու Կարապետին
15	28	ԿԻՐ	✠ Ա. զկնի ծննդ.: Բարեկ. առաջ.
16	29	Ք2	Ա. օր պահոց առաջաւորաց
17	30	Պ2	Բ. օր պահոց առաջ.
18	31	2Է	Գ. օր պահոց առաջ.
19	1	Ե2	Դ. օր պահոց առաջ.
20	2	ՈւՐ	Ե. օր պից Յիշ. Յոհաննու մարգ.
21	3	2Ք	Ս. Սարգիս, որդին Սարափրոս
22	4	ԿԻՐ	✠ Բ. Կիրակի զկնի ծննդեան
23	5	Ք2	Սրբոց Ատովմասնց զօրավարաց
24	6	Պ2	Սրբոց Սու քիասեանց վկայից
25	7	Պ2	Պահք
26	8	Ե2	Սրբոց Ոսկեանց քահանայից
27	9	ՈւՐ	Պահք
28	10	2Ք	Սրբ. Իսահակայ Պարթեւ հայրոյ.
29	11	ԿԻՐ	✠ Գ. Կիրակի զկնի ծննդեան
30	12	Ք2	Ս. Սարկոս եպ. Պրոն քհնյ. եւլն.
31	13	Պ2	Սրբոց Ղեւոնդեանց քահանայեմ

ՅԵՒՆԱՐԱՐ 31 ՕՐ

Վ. տոմար
Կ. տոմար
Յր
Յր

ՓԵՏՐՈՒՆԸ 28 ՕՐ

1	14	ԴԶ	Պահք
2	15	ԵԶ	+ Սրբոց Ղարդանանց զօրավ.՝ Յիշատակ Մեռելոց
3	16	ՈԼՐ	Պահք
4	17	ՉՔ	Կ. Պոլսոյ Ս. Ժող. 150 հայսլ.
5	18	ԿԻՐ	✠ Բուն Բարեկենդան, Ս. Կիր. քառանորդաց
6	19	ՔԶ	Ս. օր մեծ պահոց
7	20	ՊԶ	Բ. օր մեծ պահոց
8	21	ՂԶ	Գ. օր մեծ պահոց
9	22	ԵԶ	Դ. օր մեծ պահոց
10	23	ՈԼՐ	Ե. օր մեծ պահոց
11	24	ՉՔ	Ս. Թէոդորոս զօր.
12	25	ԿԻՐ	✠ Է. օր մեծ պահոց. Բ. Կիր. քառս.
13	26	ՔԶ	Ը. օր մեծ պահոց
14	27	ՊԶ	Թ. օր մեծ պահոց
15	28	ՂԶ	Ժ. օր մեծ պահոց
16	1	ԵԶ	ԺԱ. օր մեծ պահոց
17	2	ՈԼՐ	ԺԲ. օր մեծ պահոց
18	3	ՉՔ	ԺԳ. օր մեծ պահոց: Ս. Կիւրեղ. Երսմի հայրսլ. եւնս.
19	4	ԿԻՐ	✠ ԺԴ. օր մեծ պահոց: Գ. Կիր. քառանորդաց Սնտակին
20	5	ՔԶ	ԺԵ օր մեծ պահոց
21	6	ՊԶ	ԺԶ. օր մեծ պահոց
22	7	ՂԶ	ԺԷ. օր մեծ պահոց
23	8	ԵԶ	ԺԸ. օր մեծ պահոց
24	9	ՈԼՐ	ԺԹ. օր մեծ պահոց
25	10	ՉՔ	Ի. օր մեծ պահոց: Ս. Յօն. Եմի հայրսլ. եւայն.
26	11	ԿԻՐ	✠ ԻԱ. օր մեծ պահոց: Գ. Կիր. քառաս.: Տնտեսին
27	12	ՔԶ	ԻԲ. օր մեծ պահոց
28	13	ՊԶ	ԻԳ. օր մեծ պահոց

Վ. տոմար
Կ. տոմար
Յր
Յր

ՄԱՐՏ 31 ՕՐ

1	14	ԴԶ	ԻԳ. օր մեծ պահոց
2	15	ԵԶ	ԻԴ. օր մեծ պահոց
3	16	ՈԼՐ	ԻԶ. օր մեծ պահոց
4	17	ՉՔ	ԻԷ. օր մեծ պահոց: Սբց. Մանկանց քառանոցից
5	18	ԿԻՐ	✠ ԻԸ. օր մեծ պահոց. Ե. Կիր. Դասաւորին
6	19	ՔԶ	ԻԹ. օր մեծ պահոց: Շապան
7	20	ՊԶ	Լ. օր մեծ պահոց
8	21	ՂԶ	ԼԱ. օր մեծ պահոց
9	22	ԵԶ	ԼԲ. օր մեծ պահոց
10	23	ՈԼՐ	ԼԳ. օր մեծ պահոց
11	24	ՉՔ	✠ ԼԴ. Սրբոյն Գր. Լուս. մուտն ի վիրապն
12	25	ԿԻՐ	✠ ԼԵ. օր մեծ պահոց. Զ. Կիր. Գալս.
13	26	ՔԶ	ԼԶ. օր մեծ պահոց
14	27	ՊԶ	ԼԷ. օր մեծ պահոց
15	28	ՂԶ	ԼԸ. օր մեծ պահոց
16	29	ԵԶ	ԼԹ. օր մեծ պահոց
17	30	ՈԼՐ	Խ. օր մեծ պահոց
18	31	ՉՔ	Պահք: Յիշ. Յարուժն. Դազարու
19	1	ԿԻՐ	✠ Ծաղկազարդ, Եր. դռնբացեք
20	2	ՔԶ	Աւագ երկուշաբթի
21	3	ՊԶ	Ա. ԳԶ. յիշ. տասն կուսանաց
22	4	ՂԶ	Աւագ չորեքշաբթի
23	5	ԵԶ	Ա. ԵՉ. Յիշ. ընծր. Երեկ. ոտնւայ
24	6	ՈԼՐ	Ա. Ուր. Յիշկ. չարչօնց. խաչել.՝ Երեկոյ. Թաղում
25	7	ՉՔ	Ճրագ. Զատիկի: Երեկ. նաւակատիք
26	8	ԿԻՐ	✠ Զատիկ Յարձն. Տեառն մերոյ
27	9	ՔԶ	✠ Բ. օր Զատիկի: Յիշ. մեռելոց
28	10	ՊԶ	✠ Գ. օր Զատիկի
29	11	ՂԶ	Դ. օր Զատիկի
30	12	ԵԶ	Ե. օր Զատիկի
	13	ՈԼՐ	Զ. օր Զատիկի

Հին տօմ	Նոր տօմնար	Օր ամսոյ
1	14	2Ք
2	15	ԿԻՐ
3	16	Ք2
4	17	Ք2
5	18	Ք2
6	19	Ե2
7	20	ՈՒՐ
8	21	2Ք
9	22	ԿԻՐ
10	23	Ք2
11	24	Ք2
12	25	Ք2
13	26	Ե2
14	27	ՈՒՐ
15	28	2Ք
16	29	ԿԻՐ
17	30	Ք2
18	1	Ք2
19	2	Ք2
20	3	Ե2
21	4	ՈՒՐ
22	5	2Ք
23	6	ԿԻՐ
24	7	Ք2
25	8	Ք2
26	9	Ք2
27	10	Ե2
28	11	ՈՒՐ
29	12	2Ք
30	13	ԿԻՐ

ԵՊՐԻԼ 30 ՕՐ

Ե. օր Ջատ. Գլխատ. Յով. Մկրտչի
 ✠ Նոր կերակի
 ✠ Աւետում
 Աշխարհամատրան (Կանաչ) կիր.
 ✠ ՅԻՇ. ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՅ
 ✠ Կարմիր կերակի
 ✠ Երեւման խաչ
 ✠ ԼԶ օր յին. Զ. կերակի

Հին տօմնար	Նոր տօմնար	Օր ամսոյ
1	14	Ք2
2	15	Ք2
3	16	Ք2
4	17	Ե2
5	18	ՈՒՐ
6	19	2Ք
7	20	ԿԻՐ
8	21	Ք2
9	22	Ե2
10	23	Ք2
11	24	Ե2
12	25	ՈՒՐ
13	26	2Ք
14	27	ԿԻՐ
15	28	Ք2
16	29	Ք2
17	30	Ք2
18	31	Ե2
19	1	ՈՒՐ
20	2	2Ք
21	3	ԿԻՐ
22	4	Ք2
23	5	Ք2
24	6	Ք2
25	7	Ե2
26	8	ՈՒՐ
27	9	2Ք
28	10	ԿԻՐ
29	11	Ք2
Յ0	12	Ե2
Յ1	13	Ք2

ՄԵՅԻՍ 31 ՕՐ

ԼԵ օր յինանց
 ԼԸ օր յինանց
 ԼԹ օր յինանց
 ✠ Խ. օր յին. Համբարձում վիճակ
 ՇԵՎԿԱԸ
 ԽԱ օր յինանց
 ԽԲ օր յինանց
 ✠ ԽԳ. օր յին. Բ. Ծաղկազարդ
 ԽԴ օր յինանց
 ԽԵ օր յինանց
 ԽԶ օր յինանց. պահք
 ԽԷ. օր յինանց
 ԽԸ. օր յինանց պահք
 ԽԹ. օր յինանց
 ✠ Հոգեգալուստ: Բարեկ. Եղ. պնգ.
 Բ. օր հոգ. պնգ. Ե. տար Հ. Հ.
 անկախութեան
 Գ. օր հոգ. պահք
 Դ. օր հոգեգալուստ պահք
 Ե օր հոգ. պահք
 Զ օր հոգ. պահք
 Է օր հոգ. ուտիք
 Ը օր հոգ. Եղիա մրգ.
 Մրբոց Հռիփսիմեանց կուսանաց
 Մրբոց Գայանեանց կուսանաց
 Պահք
 Ս Յով. Կրպ. եւ Ս. Թանազիսէ հյր.
 Պահք
 Ժ Գր: Լուս. եւն ի վիրապէն
 Ի Տօն Կանթող Եկեղ. Ս. Էջմիածնի
 Սրբ Մանկանցն Բեթլէհեմի
 Սբ կուս. Նունեայ եւ Մանեայ
 Պահք

Հին տօմար	Նոր տօմար	Օր անոց
1	14	ԵՉ
2	15	Ուր
3	16	ՉԲ
4	17	Կիր
5	18	ԲԷ
6	19	ԿԷ
7	20	ՂԷ
8	21	ՊԷ
9	22	Ուր
10	23	ՉԲ
11	24	Կիր
12	25	ԲԷ
13	26	ԿԷ
14	27	ՂԷ
15	28	ՊԷ
16	29	Ուր
17	30	ՉԲ
18	1	Կիր
19	2	ԲԷ
20	3	ԿԷ
21	4	ՂԷ
22	5	ՊԷ
23	6	Ուր
24	7	ՉԲ
25	8	Կիր
26	9	ԲԷ
28	10	ԿԷ
28	11	ՂԷ
29	12	ՊԷ
30	13	Ուր

ՅՈՒՆԻՍ 30 ՕՐ

Սրբոց իշխ. Սահակայ եւ Յովսէփս
Պահք. Զիւլատէ
Ս. Ներսէս մեծ եւ Խատ եպ.
† Գ. Կիրակի Բարեկ. Հուս. պից.
Ս Եպիփան Կիպրացի Բաբել.
Ս Կոստանդ. Թագ. եւ հեղ. Թգհի
Պահք
Ս. Թէոդիտոն Թալիլէ եւն.
Պահք
† Գիւտ նշխ. Ս. հօրն Գր. Հուս.
Գ. Կիր. զկնի Հոգեգալստեան
Ս. Անտոնիոս, Թէոքիլոս եւլն.
Ս. Գան. մրգ. Սեղ. Միս. եւ Սբեղ.
Պահք
† Սրբոց Թրգ. Սահ. եւ Մեար.
Պահք
Ս Տրդատ Թագ. եւ Աշխ. Թ-հին
† Ե. Գիւտ Տփոյ ս. Աստ. Ծածնի
Ս. Կալիստրոս, Դունկիանոս
Ս. Զաքարիա մարգարէ
Պահք
Ս. Եղիսէ մարգարէ
Պահք
Սբ. ԺԲ. առաք. եւ Պող. Ե. Գ. առաք.
† Զ. Կիր. Բարեկ վարդ. պից.
Ս. օր վարդ. պահոց
Բ. օր վարդ. պահոց
Գ. օր վարդ. պահոց
Գ. օր վարդ. պահոց
Ե. օր վարդ. պահոց

Հին տօմար	Նոր տօմար	Օր անոց
1	14	ՉԲ
2	15	Կիր
3	16	ԲԷ
4	17	ԿԷ
5	18	ՂԷ
6	19	ՊԷ
7	20	Ուր
8	21	ՉԲ
9	22	Կիր
10	23	ԲԷ
11	24	ԿԷ
12	25	ՂԷ
13	26	ՊԷ
14	27	Ուր
15	28	ՉԲ
16	29	Կիր
17	30	ԲԷ
18	31	ԿԷ
19	1	ՂԷ
20	2	ՊԷ
21	3	Ուր
22	4	ՉԲ
23	5	Կիր
24	6	ԲԷ
25	7	ԿԷ
26	8	ՂԷ
27	9	ՊԷ
28	10	Ուր
29	11	ՉԲ
30	12	Կիր
31	13	ԲԷ

ՅՈՒՆԻՍ 31 ՕՐ

Յիշ Տապ. հնոյ եւ նորոյ: Նաւկ.
† վարդավառ. Այլակերպութիւն
Քրիստոսի: Զիւհիճճէ
† Բ. օր վարդ. Յիշ Մեռեցոց
Գ օր վարդավառի
Պահք
Ս. Եսայի մարգարէ
Պահք
Ս. Թաղ. առք. եւ Սանդխ. կոյս
† Բ. Կիրակի զկնի վարդավառի
Ս. Կիպրիանոս, Յուստինէ կոյս
Ս. Աթանազիսէ եպս. եւլն. իսլ.
Գուրպան պայրամը
Պահք
Ս. նախահարք Ադամ, Աբել, Ենոք
Պահք
Ս. Արիստակէս, վրձանէս Յուսիկ
† Գ. Կիր. զկնի վարդավառի
Ս. Մակարայեցիք Եղիազար քնյ.
Սրբոց երկուտասան մարգարէից
Պահք
Ս. Սօսիիա, Պիսմոս, Էլպիս Ագապի
Պահք
Ս. Պետրոս հայր Վաս եպս.
† Գ. Կիրակի զկնի վարդավառի
Ս. Անտոն-Տգնաւոր
Ս. Թէոդ. Թագ. եւ մանկ. Եփես.
Պահք
Ս Կիրակոս, Յուդիտա եւլն.
Պահք
Ս. Աթանաս հյր. Գր. Աստծ-աբան
† Ե. Կիրակի զկնի վարդավառի
Ս. վահան Գողթն. Եւզինէ կոյս
Իսլ. 1342 Մուհարրէմ

Հին տօմար
Նոր տօմար
Օր ամսոյ

ՅԵՐՈՍԵՄՍ 31 ՕՐ

1	14	գ2	Ս. Տգն. Տրիփոն, Պարսամ, Ռնոփ.
2	15	դ2	Պանք
3	16	ե2	Ս. Եղգինէոս, Մակարիոս եւ Նն.
4	17	ուր	Պանք
5	18	կր	Եփեսոսի Ս. Եղ. 200 հայրապ.
6	19		† Զ. Կիր. Բարեկ. ՍՏ. ածնի պնց.
7	20	դ2	Ս. օ Ասած. նի պանոց
8	21	սԿ	Բ. օ Սատ. սի պանոց
9	22	կժ	Գ. օ ՍՏ. նի պանոց
10	23	չե	Գ. օ ՍՏ. նի պանոց
11	24	ՆՅՐ	Ե. օ ՍՏ. նի պանոց
12	25	չս	Տօն Հոգոյկանի Ս. Եջմիած. Եւկք
13	26	չիր	† Վերափոխումն. Ս. Աստուած.
14	27	ճ2	† Բ. օ Վերափ. Յիշ. մեռելոց
15	28	գ2	Գ. օ վերափոխման
16	29	դ2	Դ. օ վերափոխման. պանք
17	30	ե2	Ե. օ վերափոխման
18	31	ուր	Զ. օ վերափ. պանք
19	1	չր	Է. օր վերափոխման
20	2	կիր	† Ը. օր Բ. Կիր. զկնի վերափ.
21	3	բ2	Թ. օր վերափոխման
22	4	գ2	Ս. Յովակիմ Սննա եւ Իզաբ. կնք.
23	5	դ2	Պանք
24	6	ե2	Ս. Երեմիա մարգարէ
25	7	ուր	Պանք
26	8	չր	Ս. Թովմաս առաքեալ
27	9	կիր	† Գ. Կիր. Գիւտ գօտւոյ ս. ՍՏ.
28	10	բ2	Ս. Ստեփ. Ուննցի, Գոհարիսէ
90	11	գ2	Ս. Մարգ. Եգեկիէլ, Եզր եւ Նն.
12	12	դ2	Պանք Սէփէր
33	13	ե2	Ս. Յով. Կարապետ եւ Յօր արդար

Հին տօմար
Նոր տօմար
Օր ամսոյ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 30 ՕՐ

1	14	ուր	Պանք
2	15	չր	Ս. Առաք. Յակոբ եւ Շմաւոն
3	16	կիր	† Գ. Կիր. զկնի վերափ.
4	17	բ2	Ս. Անարէ գօր. եւ բանակ նորին
5	18	գ2	Ս. Անդրիանոս, Անատօլ եւ Նն.
6	19	դ2	Պանք
7	20	ե2	Ս. Արքանամ, Խորէն, ԱՏ. առք
8	21	ուր	† Պանք: Ծնունդ Ս. Աստուած. ի
9	22	չր	Նիկիոյ Ս. Եղ. 318 հայրապետ.
10	23	կիր	† Ե. Կիր Բարկ. Ս. Խաչի պնց.
11	24	բ2	Գ. օր պանոց Խաչի
12	25	գ2	Բ. օր պանոց Խաչի
13	26	դ2	Դ. օր պանոց Խաչի
14	27	ե2	Ե. օր պանոց Խաչի
15	28	ուր	Ե. օր պանոց Խաչի
16	29	չր	Տօն Եկեղեցոյ: Նաւակատիք
17	30	կիր	† Խաչվերաց
18	1	բ2	† Բ. օր Խաչի Յիշ. Մեռելոց
19	2	գ2	Տօն եկեղեցոյ
20	3	դ2	Տօն եկեղեցոյ պանք
21	4	ե2	Տօն եկեղեցոյ
22	5	ուր	Տօն Խաչի
23	6	չր	Տօն Խաչի
24	7	կիր	† Բ. Կիր. Բար. Պարագայ Խաչի
25	8	բ2	Պնք. Ս. Սամսա. Սիմ. սիւնակ.
Է6	9	գ2	Պանք: Ս. Բեիլրոնէ, Մարիանէ,
27	10	դ2	Պանք Շուշան
28	11	ե2	Պանք: Ս. Բարաղամ, Անճիմոս,
29	12	ուր	Պանք Իսլ. Բէպիլէվիլէ
20	13	չր	Ս. Գեորգ գօր. Արսկասո եւ Նն.

Հին տոմար
Կ. Կ. Կ. Կ.
Օր ամսը

ՀՈՅՆԵՐԵՐ 31 ՕՐ

1	14	Կիր	† Գ. զկնի խաչի: Վարագ. Խաչ
2	15	բ2	Ս. Գաւիթ Դմնեցի, Ղամփէոս
3	16	դ2	Ս. Եւտամէոս, Երմոնէ եւայլն
4	17	դ2	Պահք
5	18	ե2	Ս. Իշխ. Սահակ, Համազասպ
6	19	ուր	Պահք
7	20	չբ	Սրբոց 72 աշակերտացն Բրիս.ի
8	21	վիր	† Գ. Կիրակի զկնի խաչի
9	22	բ2	Ս. Հայրապ. Փակաս, Երանոս
10	23	դ2	Ս. Կուս. Թեկղի, Վարվառէ
11	24	դ2	Պահք
12	25	ե2	Ս. Պանդուլէոն բժ. Եպրաքսէ Կոյս
13	26	ուր	Պահք
14	27	չբ	Սրբ. Թարգ. մերոց Եղլշէի եւն.
15	28	Կիր	† Ե. Կիրակի զկնի խաչի
16	29	ձ2	Գիււտ նշխ. Ս. Գր. Աղուանից: Անտոն, Կրօնիգէս եւն.
17	30	դ2	Ս. Առաք. Անանիա, Մատթէոս
18	31	դ2	Պահք
19	1	դ2	Ս. Դիոնեսիոս, Տիմոթէոս, Տիտոս
20	2	ուր	Պահք
21	3	չբ	Ս. Առաք. Մատթ. Մարկոս, Ղուկաս եւ Յովն.
22	4	Կիր	† Զ. Կիրակի զկնի խաչի
23	5	բ2	Ս. Կունկիանոս, Յովսէփ եւայլն
24	6	դ2	Ս. Թէոդիտոն, Զենոն եւն.
25	7	դ2	Պահք
26	8	ե2	Ս. Խարճեանք. Արտեմ, Բրիստափ. Իսլ. Գասըմ
27	9	ուր	Պահք
28	10	չբ	Ս. Ժ.Բ. վրդապ. Ռեմէոս Բէպախսրր
29	11	Կիր	† Ե. Կիր. զկնի խաչի Գիււտ խաչ
30	12	բ2	Ս. Անաստաս, Վարսս եւայլն
31	13	ե2	Ս. Հիպոթիբեանի. Սուեռ. Բարճ

Հին տոմար
Կ. Կ. Կ. Կ.
Օր ամսը

ՀՈՅՆԵՐԵՐ 30 ՕՐ

1	14	դ2	Պահք
2	15	ե2	Ս. Յօհան Ոսկեբերան
3	16	ուր	Պահք
4	17	չբ	Տօն ամենայն սրբոց հնոց եւ նորոց
5	18	Կիր	† Ը. Կիր. զկնի խաչի
6	19	ձ2	Ս. Ստեփ. Հռովմայ հայրապ.
7	20	դ2	Ս. Ակեփսիմէ եպ. Արիթաշ սրգ.
8	21	դ2	Պահք
9	22	ե2	Ս. Հայրապետ Մետրեփանոս
10	23	ուր	Պահք
11	24	չբ	Սրբոց Հրեշտ. եւ ամ. երկ. զօրաց
12	25	Կիր	† Կիրակի զկնի խաչի
13	26	բ2	Ս. Մելիտոս հայրապ.
14	27	դ2	Ս. Գեմետր. Բասիլիակոս
15	28	դ2	Պահք
16	29	ե2	Ս. Գուրիաս, Սամուէլաս
17	30	ուր	Պահք
18	1	չբ	Ս. Առաք. Անարէ, Փիլիպոս
19	2	Կիր	† Ժ. Կիր. զկնի խաչի: Բար. Յիս.
20	3	բ2	Ս. օր պահոց յիմնակի
21	4	դ2	† Բ. օր պահ. յիս.: Ընծ. ս. Ա.Ճ.ի
22	5	դ2	Գ. օր պահոց յիմնակի
23	6	ե2	Գ. օր պահոց յիմնակի
24	7	ուր	Ե. օր պահոց յիմնակի
25	8	չբ	Ս. Գր. եւ Նիկող. սրանչ. հայրապ. Միւռոն եպս.
26	9	Կիր	† Ս. Կիր. յիս. Ճէմագ. Եվկէլ
27	10	բ2	Ս. Կուս. Յուլիանէ եւ Վասիլուհի
28	11	ե2	Ս. Կունկիանոս, Տարագրոս
29	12	դ2	Պահք
30	13	ե2	Ս. Կղիմաս հյրապ. եւ Բագրու. եպ.

Հին տոմար
 Կր յոմար
 Օր ամսոյ

ԳԵԿՏԵՄԲԵՐ 31 ՕՐ

1	14	ուր	Պանք
2	15	չբ	Ս. առք. թագ. եւ Բարթողմէոս
3	16	հիր	† Բ. Կիրակի Յիսնակաց
4	17	յշ	Ս. Գեներիոս, Մերկերիոս եւ ին.
5	18	էշ	Ս. Աբգար Թագ. անդր. հաւատ.
6	19	էշ	Պանք
7	20	յշ	Ս. հարք եգիպտաց. Պող. Մակար
8	21	ուր	Պանք
9	22	չբ	† Յուս. Ս. Ստեփանի յԱննայէ
10	23	հիր	* Գ. Կիր. ինն. Բրկ. Ս. Յկ. պնց.
11	24	յշ	Պանք. Ս. Մինաս, Ալէքսանոս
12	25	էշ	Պանք Ս. Կոնովիանոս, Շմաւոն
13	26	չշ	Պանք
14	27	յշ	Պանք Ս. Օգսէնոս. Եւստր. Ովրեստ.
15	28	ուր	Պանք
16	29	չբ	Ս. Յակոբ Մծբնայ հրպ. Մարուգէ եգ. Մելիտոս նպիս.
17	30	հիր	* Գ. Կիրակի յիսնակաց
18	31	յշ	Ս. հրպ. Իգնատիոս, Ադդէ
19	1	էշ	Ս. Թէոպոմպ. Թէոս եւ այլն:
20	2	էշ	Պանք
21	3	յշ	Ս. Կուս. Ինդոս, Գովնա
22	4	ուր	Պանք
23	5	չբ	Ս. Գաւիթ մրգ. եւ Հակ. առաք.
24	6	հիր	* Ե. Կիրակի յիսնակաց
25	7	յշ	Ս. Ստեփանոս եւ առջն. Մարտ.
26	8	էշ	Ս. առաք. Պողոս եւ Պետրոս:
27	9	էշ	Պանք [Ճէմ. ախըր:
28	10	յշ	Ս. Որդիք Որոտ. Յկբ. առաք. եւ Յովն. աւետ.
29	11	ուր	Բարեկենդան ծննդեան պանոց
30	12	չբ	Ս. օր պանոց: Ս. Բարսեղ. Եփրեմն
31	13	հիր	* Բ. օր պնյ. Զ. Կիր. իննակա

ՌՈՒՄԷՆ ԱԶԳ. ՏՕՆԵՐ

- 5 Փետր. Միացեալ Իշխանապետութեանց
 4 Մարտ. Յայտարարութիւն Ռուսէն թագա-
 ւորութեան
 1 Մայիս Բարոյ Վոտայի ընտրութիւնը, ժամա-
 նուժը եւ գահակալութիւնը:
 8 Մայիս Յայտարարութեան. Ռուս. անկախութեան
 10 Մայիս Թագղ. Ռուս. առաջին Թագաւորին
 24 Յունիս Տարեդարձ 1848ի յեղափոխութեան
 4 Օգոստոս Անուան տօն Մարիա թագուհիին
 24 Օգոս. Տարեդարձ ծնդ. Ֆէրոինանտ թագաւորին
 16 Հոկտ. Տարեդարձ ծննդեան Բարոյ Իշխանին
 1 Նոյ. Տարեդարձ ծննդեան Թագուհիին
 1 Գեկտ. Տարեդարձ յայտարարութեան Մեծն
 Ռուսմանիոյ՝ Պեսարապիոյ, Պուքովինայի եւ
 Թրանսլլվանիոյ հետ միացման:
 8 Տարեդարձ Արքայական ամոլին պսակադրու-
 թեան:

ՌՈՒՄԷՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԵՐ ՄԵՐ
 ԼՈՒՐ ՕՐԵՐՈՒՆ ՀԱՆԴԻՊԱԾ

- Ն. Տ. Հ. Տ.
 20 7 Յունուար Յովնաննէս Մկրտիչ
 15 2 Փետրուար Տեառնդառաջ
 7 Ապ. 25 Մարտ Աւետուհին
 6 Մայիս 23 ապրիլ Ս. Գէորգ
 3 Յունիս 21 Ս. Կարապետ եւ Հեղինէ
 12 Յուլիս 29 Յուլիս Ս. Պետրոս Պողոս
 2 Օգ. 20 Յուլիս Ս. Եղիա
 19 Օգ. 6 Այլակերպութիւն
 28 Օգ. 15 Վերափոխումն Ս. Կուսին
 21 Սեպ. 8 Ծնունդ Ս. Կուսին
 8 Նոյմ. 26 Հոկտ. Ս. Տիմիգրու
 21 Նոյ. 8 Հոկտ. Միքայիլ եւ Դարբիէլ
 4 Դեկտ. 11 Մուսք յեկեղեցին
 19 Դեկտ. 6 Ս. Նիկողայոս

ՄԵՐ ՍԵՆՍԱՐԻՆ

1923 տարին սեմին վրայ կը կոխենք՝ կաղանդն է, 1923 տարիներով բեռնաւոր-ւած, որ կուգայ հիւրընկալ Ռուսաստան մէջ ցի-րուցան եղած Հայերուս դոները դարնելու:

Այս, մենք ամէնքս կը ճանանք այդ կա-ղանդը: Մեր հայրենական աներուն մէջ, մեր օճախներուն առջև, մեր թանիրներուն և կրակա-րաններուն շուրջը, մեր վառարաններուն քովիկ, վերջապէս մեր տաքուկ սենեակներուն մէջ հիւ-րընկալած ենք զինք, այդ «ձիւնի պէս ձերմակ» կաղանդը:

Կուգայ ան այս անգամ ո՛չ թէ իր ձեփ ճեր-մակ հազուստով, այլ դարկահար, սեփ-սե:

Մեր ամէնուն դոները կը բանայ — ան նոր տարին կը նուիրէ — կեանքը: Բայց չէ՞ք զգար, ինչպէ՞ս մահ կը հոտին անոր տուած բոլոր նուէր-ները:

Մենք կը ճանչնանք այդ Մերուկը. մեր այդ դաժան ճակատագիրը: Ան մեր պատու-թեան էջերը ալիւն ներկած է, երկրաշարժերով, սովերով, համաճարակներով, անընդհատ կոխեն-քով՝ մեր հայրենական օճախը քարու քանդ ըրած է:

Ո՛հ, ձեզմէ՛ շատերը իրենց աչքերով տե-

65-82443

սած են զինք երբեմն կարմիր՝ երբ Արաքսն ու Տիգրիսը հայ արիւնով կարմրած էին:

Այս ան Մերուկն որ չոփ չոր ոսկորներով սե մանդաղը շարժեց ու քաղեց կեանքերը մխա-ցած ձեր ամէնէն սիրելիներուն՝ աքսորանքի ճամբան, անապատի աւաղներուն վրայ:

Այս անգամ աւելի՛ կը սոսկամ այս Սեւ տարիէն:

Մեր ամենէն չքաւորը՝ կաղանդի առտուն գէթ պատառ մը հաց ունի իր զաւկին, տղուն հոգ չէ թէ չոր և սե:

Դուն ո՛վ հայ սիրտ, պիտի կարենա՞ս կուլ տալ այդ պատառիկը երբ յանկարծ դիմացդ դաշտ մը բացուի, ուր ձիւնին վրայ աղբարիկներդ, աղ-գականներդ՝ ցուրտին օրերով անօթի մնալէ ետք՝ ձեռքեր՝ ին քեզի երկարած «հաց, հաց» կը կա-կազեն:


Երջանիկ Հայեր. դեռ ձեր հացի պառաւը կուլ չտուած՝ դատեցէ՛ք. պէ՛տք է օգնել անոնց թէ ո՛չ:


Մենք մինչև և հիմակ մեր ցեղին անունը բնաջնջող մահին չզիմադրեցինք:

Պէ՛տք է յուսահատիլ:
— Ո՛չ երբէք:

Թէև և շատերը կը կարծեն թէ մեր կեանքի կանխեղին իւրը սպառելու մօտ է, բայց զիտենք զերագոյն ճիգով մը շարժուալ նոր կեանքի մը ճամբան դանկ:

Մինչև այժմ մեր աչքերը ճիշդ զայն դար-ձուցած սպասելիսը չենք ունենում, սպասենք





Խնաց Խնաց որբեցւոռս.

(Հրատ. Պուրեհի Հայ Տիկեանց Որբախնամին)
 դեռ, այսօր կամ վաղը պէ՛տք է մեր Արշարոյսն
 ալ արթննալ ու մեր ձեր երազները կրիտասար-
 ձացած՝ իրականանան:

* * *
 Ռուժանահայեր մեր ժամանակակից պատ-
 մութիւնը պիտի գրուի. մեր «եղբայրական օգ-
 նութիւնը» արձանացուցած զիմացնիս՝ ամէնքս
 մեր լուժանները ձգենք այն՝ դանձանակին մէջ՝
 զոր այսօր մեր քոյրերն ու եղբայրները մեզի
 կ'երկարեն:

Թող մեր պատմութեան սե ու կարմիր է-
 ջերուն յաջորդէ սակեառ էջ մը՝ որուն մէջ ար-
 ձանագրուած ըլլայ թէ Ռուժանիոյ փոքրիկ գա-
 ղութը օգնեց իր հարեանակիցներուն ու կանգնեց
 հաղարար հայ կեանքեր՝ որոնք մեր կանթեղին
 յոյսը անշէջ պիտի պահեն:

Ապրի՛ն ամէնքը եւր լուժան կը ձգեն այս
 նպատակով:

* * *
 Վեր ելիր, լքուած հողի, ճակատդ կապոյտ
 երկնքին գարձուր:

Կանգնելու համար պէտք է նախ ինալ,
 յարութիւն տանելու համար պէտք է մեռնիլ:
 Մի յուսալքութիւր, ամենէն անուշ արեւ փոթորի-
 կէն ետք կ'երեայ: Վաղգերը ձմեռէն ետք կը
 բացուին:

Մենք ալ մեր անձայր տառապանքէն վերջ
 օր մը վերջապէս պէտք է ողջունենք
 մեր հմայիչ նաւասարդը, մեր վարդազոյն՝ Նոր
 Տարին:





Մեր փոխի ներք ինչպես կ'օգնեն իրե՛ց հասակակի ներուն

ԿԵԱՆՔԻ

Կեանքը ծով մ'է, տիկ' օպիլ...
Կը հոսի գուն, մերք լսելեայն,
Իսկ մեր հոգին հարիզոն լայն,
Կը պարփակէ զայն անդաբիկ:

Մեր խոճերն եւ յոյզերն անուշ
Վարդեր փրքած՝ եւ՛ ծովափին
Պատանկներու կանուխ կամ ուշ
Սառ շունչին տակ կը քորափին:

Սէ մեր կեանքէն ինչպէս վարժուր,
Պիտի մնայ լոկ յիշատակ,
Սէրը անդունդ մը անյատակ,
Ուր մեզ կիցնայ, երազել լուռ:

ՍԱՄՓՍՈՆ Մ. ԱՐԵՐՈՒՆԵՐ

Ո՞ՐԻ Է ՆԵՐԷ

Յայտնի Ռուս նկարիչ Վերեչչակինը հրաշալի պատկեր մը ունի՝ «Շիպկային վրայ ամէն ինչ հանգիստ է», 1877. 1878 Ռուս-Տաճկական պատերազմի անցքէ մը վարագոյրը կը բանայ: Ռուս զորքերը անյաջող փորձեր կընեն զրուել Պլեյսան, մինչդեռ զօր. Գուրքոն կուզէ անառիկ Շիպկային վրայ զիրքեր ստեղծել: Չհրան օրեր են: Հաղարատը Ռուսեր կը կտորուէին զրոէն: Սակայն հեռագիրը ամէն օր մեզ կը հանգստացնէ՝ «Շիպկային վրայ ամէն ինչ հանգիստ է»: Սա հանգստու թիւնն է որ կը ներկայացնէ Վերչչակինի պատկերը: Սարերը ծածկուած են ձիւնի թանձր շերտերով: Մրրիկը անդադրում կը փչէ, կը տանի ամէն ինչ եւ ձիւնի բլուրներ կը կուտակէ անդունդներու վրայ: Անտարքեր կը փայլին արեգակի ճառագայթները չըտաքացնելով: Մէկէն ի մէկ մարդ մը չէք տեսներ: Բայց անաձեռք մը ձիւնէն դուրս ելած, անա կարծես մարդու զուրի մը. ինքը չերեւար, թաղուած, քնած յաւիտենական քնով... Անա անողէտք զէնքեր հոս հոն ընկած... Անուելի տեսարան մը: Ու տակը գրուած՝ «Շիպկային վրայ ամէն ինչ հանգիստ է»...:

Անա ասիկա է որ ես միշտ կը տեսնեմ ու կը յիշեմ երբ կուտուէմ ասիւրեմ Ռուսմանա՛յոյ բոլ հասարակական շարքերը...

Հարկաւ ողբերգութիւն մ'է, ծանր, մեծ, տնհաւատալի, սակայն իրական ողբերգութիւն մը որ այսօր Ռուսիոյ մէջ մեծ հայ գաղութ մը կայ ու չըկայ—

Հայ հասարակութիւն...

Տասնչորրորդ դարէն Հայերը հաստատուեր են հոս, մեծամեծ ծառայութիւններ ընելով երկրին:

Անոնք հայութեան ոգով վառուած՝ բերեր են հայրենիքէն իշխատակներ: Շիներ են հոս եկեղեցիներ, անկեկանոցներ, որրանոցներ, դպրոցներ... Այժմեան Ռուսիոյ հայութիւնը ոչինչ կը չինէ ու հին չէնքերը անկարող է պահպանել:

Առէք հարուստ Պուքրէշը ուր 7-8 հազար հայութիւն մը կայ:

Ուր է այդ հայութիւնը, ի՞նչ կընէ, ի՞նչ կը մտածէ:

Կարգ մը ընկերութիւններ խեղճուկ վիճակի մասնուած:

Դպրոց մը՝ որ մարդալայել շէնք չունի:

Տուրքերու յանձնաժողով մը որ ապահովադրական ընկերութիւն մը կը կարծուի...

Որպէսզի բոլորը՝ մեծերէն մինչեւ պղտիկները խուսափին ու է տուրքերէ...

Թաղականներ, Հողարարձութիւն եւ դանազան ընկերութիւններու վարչութիւններ բորբոքուած ու վառուած միշտ բարձր ցանկութիւններով որ երբէք կարողացած չեն իրադրուել...

Որովհետեւ հարուստ Պուքրէշին մէջ գրամ չեն դաներ...

Դրամ չգտան Հայաստանին իրական օգնութիւն հասցնելու համար:

Զթեթեւեցողին անոր սովը:

Չ'ուզարկեցին քինա, օճառ, որպէսզի առաջըն առնուի հիւանդութիւններուն...

Այսօր երբ ահագին կարիք կայ Հայաստանէն դուրս, երբ Իզմիրի աղէտը ու Թրակիայի խուճապը առաջ եկան, երբ ամէն տեղ հայութիւնը սթափուեցաւ քնէն, կը վազէ օգնութեան՝

Հարուստ Պուքրէշը միայն 25 հազար լէյ, այսինքն 150 տուրք ժողովեց...

Եւ անգամ դժգոհներ հրապարակ ելան.

Որպէսզի և ոչ մէկ ժողովարարութիւն ըլլայ: Ողբերգութիւն մը չէ՞ միթէ որ Պուքրէշի հայը կը կարգայ, զխտէ, կը տեսնէ հայութեան ծանր դրութիւնը, օգնութեան անհրաժեշտութիւնը ու սա բոլորը...

Կէ կլլէ բաժակ մը սուրճի պէս...

Մեկուսացած, քաշուած իր անկիւնը, ան սառնասիրտ, անտարբեր կը դիտէ բոլորը, համրի մը նման, կարծես կորցրած խօսելու ձիրքը...

Ամէն ինչ հոս կարող է փճանալ ու նեխուիլ, հասարակական կեանքը ճահիճ մը դառնալ, Պուքրէշի հայը սակայն ամէն ինչ կը տանէ ու կը համբերէ...

Ոչ անոր համար որ անոր համբերութիւնը

մեծ է ու անսահման, այլ միայն յանուն իր եօին, իր անձնական նեղ ըմբռնած շահերուն...

Չուզէ անդամ պահ մը կանգ առնուլ ու խորհլ : Գործի մարդ է, ինչ կը պահանջէք : Շահել կուզէ դրամ, միշտ դրամ, շատ դրամ, որպէսզի ճոխ ապրի.

Որպէսզի միլիոն մը լէյ օտիտ տայ սիրասուն աղջկանը ու երեք հարիւր լէյ նետէ մեր թշուառ հայերու երեսներուն :

Ինչո՞ւ պիտի ցաւի տեսնելով աղզի աղէտը : Կանցնի մօտէն, խցելով ականջները ու փակելով աչքները...

Ու կը կրկնուի այսօր հոս մեր հին աւանդական անէծքը՝

«Ա՛ռտէին, ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին...»

II

Անգամ անգամ կիրակի օրերը սթափուելու ու դարթնելու անյաջող փորձեր կ'ըլլան...

Հարիւր մարդ եկեղեցի կուգան՝ ցոլուն պատերուն նայելու ու Եկմալեանի երաժշտութիւնը լսելու համար :

Բռան մարդ բակին մէջ զիրար կը տեսնեն «նորու թիւներ» իմանալու համար :

Իարձեայ նոյն հինգ վեց «աղգային գործիչները» հեւ ի հեւ կը վազեն դռնէ դուռ՝ եկեղեցի, յետոյ դպրոց, ուր կայ ժողովը մը եւ թաղականներու սենեակը ուր կայ ուրիշ մի դարձեալ ժողով...

Ու սա երեք կ'սխարհուած դռներու մէջտեղ քանի գեղեցիկ ծրագիրներ կան թաղուած, անդարձ թաղուած...

Սակայն արդէն ժամը երկուս է, ժամանակ է ճաշելու ու եզրործիչները շտապով կը ցրուին : Ու երկուշաբթի Շիպկայի նոյն հանգստութիւնը...

Սակայն Պուքրէշը ունի 7-8 հազար Հայեր : Ինչո՞ւ անոնք պահուեր են ու չեն երևար : Ո՞ւր են, ինչպէս ժամանակ կ'անցնեն...

Շրջեցէք պոտիկաները, սրճարանները, գացէք Չիամէջիու պարտէզը :

Դուք կը գտնէք մեր Հայերուն հոն կամ ձեռքերնին ցուխա, կամ կողքերուն օտար պոտիկ կիներ և կամ թղթախաղով տարուած...

Ահա ուր, և ահա ինչպէս կը վասնուին մեր վաստակը և մեր առողջութիւնը օրը օրին, շարաթներ, ամիսներ, տարիներ...

Մեր ունեւորները կ'աղասերուին և կը օտարանան կամաց կամաց մտնելով այն խեղճ ղորմեկներու կարգը որ «հայ եմ կ'ըսեն, հաւատքով, ազգով... Ռուսէն քաղաքացի...»

Ու կ'ուրանան իրենց հայութիւնը...

Միջին եւ բանուոր դասակարգերը կը կոտորւին—

Թոքախտէ և վեներական հիւանդութիւններէ...

Այո, վառ կու գայ հոս հայութիւնը, յետոյ կը պըպըրայ և վերջը կը մարի...

Ծրագրի մը նման ո՞ր վառուեր է երկու ծայրերէն...

Մեր Շիպկային վրան օլ ուրեմն—

«Ամէն բան հանգիստ է»

Հարկաւ վերջին դերեղձանային հանգստու-

Սեւաճր:

Տեղ տեղ դուք կը տեսնէք հայու մը գլուխ:

Տեղ տեղ միայն հայու մը ձեռք...

Ամբողջութիւնը կը կոտորուի մեր աչքեր-
նուս առաջ աւելի անեղ ցրտէ մը...

Որովհետեւ մեր հասարակական բարքերը
անկու մի չըջանին մէջն են:

Որովհետեւ մենք տարուած ենք միայն մեր
եսերով, մեր կրքերով, մեր անձնական շահերով...

Ու խեղազարներու նման առաւօտէ մինչ
իրիկուն կը վազենք շահի ետեւէն:

Գործի մարդիկ ենք վերջապէս... Դրամ կը
փնտռենք, դրամ կ'ուզենք շահի, միշտ դրամ,
չտո դրամ, որպէսզի ճոխ ապրինք:

Ու անտարբերակ թաղուինք՝

Երկու մէթր հողի տակ...

Մեր սրտերուն ախրեր է պաղ, խոնաւ ան-
տարբերութիւն մը, որմէ ցուրտ շունչ մը կ'ելլէ, կը
փչէ ու կը տանի հոսի ցիրուցան հայութիւնը
ինչպէս ուշ աշնան տերեւները քամին...

Սակայն ինչո՞ւ ասանկ ըլլար ու հայութիւ-
նը որ վառ կու գայ հոս, պըլպըլար ու մարէր...

Սա Շիպկային վրան չըկան քանի մը ազ-
նիւ դէմքեր որ յիշէին իրենց պարտքը հանդէպ
միջին եւ բանուոր գասակարգերը, փրկելով զա-
նոնք ցուրտ քայէն, թղթախաղէն ու վնասական
ախտերէն...

Անոնց է մեր խօսքը՝

Անոնց է մեր առաջարկը՝

III

Ելք կայ փրկելու հոսի հայութիւնը:

Այդ ելքը ուժեղ կազմակերպութի մէջն է:

Այն կազմակերպութի մէջն է որ ունին ու-
րիշ ազգերը:

Հայ համայնքը պիտի կեանք ստանայ:

Իր սահմանագրութիւնով ընդունուած Ռու-
մէն խորհրդարանէն:

Համայնքը պիտի ունենայ իրաւունք տուրք
դնելու իր անդամներու վրայ:

Ու դրամ ան ատեն կը գտնուի:

Տուրքերու յանձնաժողովը 1,800,000 կը
սպասէր ու կը ստանայ միայն 400 հազար:

Որովհետեւ կամաւոր տուրք չըլլար:

Տուրքը տուրք պիտի ըլլայ:

Մտիպողական:

Օրէնքով ճանաչուած:

Ու պաշտօնանուած:

Որ ուժով ալ կարելի ըլլայ գանձել անոնց-
մէ որ կարող են իրենց զաւակներուն միլիոն
օմիտ տալ ու կը ինչայնն երեք հարիւր լէյ ազգի
համար:

Տուրք որ եղաւ՝ համայնք փրկուած է:

Մենք կուսկանք հոս ազգային տուն՝ չէնք
մը ուր տեղական հայութիւնը օգտակար դուար-
ճութիւններ կը ստանայ:

Մինք կունենանք դպրոց, լսարան, թատրոն :
Մենք կունենանք կարողութիւն զարգացնելու մեր մշակոյթը, բարձրացնել, աղնուացնել մեր ժողովուրդը .

Սա ճամբովն է որ կարելի կ'ըլլայ կուռելի ցուլքայի, թղթախաղի եւ անառակութիւններու դէմ...

Բոլորին համար տաք, հրւրընկալ, գեղեցիկ անկիւն մը ուր հայ խօսքը կը լսուի, հայ արուեստը կը պաշտուի ..

Ինչ հրաշքներ պիտի ըլլան :

Միայն եթէ քանի մը աղնիւ դէմքեր իրենց վրայ վերցնեն ցանկութիւն, և ունենան կամք մը իրագործել սա երազը... մանաւանդ այժմ հեշտ է երգ կան հոս կարող ուժեր որ բոլորը կը լծուին ու կօժանդակեն սա սուրբ գործին...

Եւք կայ փրկելու ժողովուրդը: Պէտք է փրկել .

Եւ ինչո՞ւ հայը որ վառ կուգայ հոս, միայն պըլպըլայ ու մարի

ձրագի մը նման որ վառուեր է երկու ծայրերէն

Գ.Ր. ՉՅԼԵՈՒՇԵԱՆ



ՁԻՆՈՒՈՐԻ ՕՐԱԳԻՐԷՍ

ԿՈՅԻ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅԻՐԸ

42 երրդի առաջին վաշտին բժիշկ կարգուելէս ի վեր, չորս օր անցած է: Մեր վաշտը մէկ շարթուան հանգիստի համար հոս եկած է. երկու օրէն պիտի մեկնի կրակի առաջին գիծը:

Մեր վաշտը գրեթէ կիսուած է: Ճակատի վրայ ինկող ղինուորներու պարապը լեցուցած են տարէց մարդիկ, ինծի այնպէս կուգայ թէ խոշոր մօրուքներու տակ ծածկուող կուրծքերը անոնց թելիքուն պէս զողզոջուն կ'ըլլան: Թերևս կը սխալիմ: Վաղը կրակի դժին վրայ կը տեսնենք:

Մեր հանգիստի վերջին օրէն օգտուելով՝ այսօր գացի Ագպաշ՝ լեռնային ճամբէ մը որ Արր Պուրնու կը տանի:

Հոն տեսայ մեր նախկին անասնարոյժ՝ ինսան էֆէնտին: Իր կրկնոցը, բաճկոնակը հանած, գործով մը զրաղած էր:

Ինսան էֆէնտին անական աշխատութիւններու վարժ երիտասարդ մըն է: Որոշ պարապմունք չ'ունէի, ներս մտայ, հետաքրքրուեցայ թէ ինչ կ'ընէ:

Աշխատութեան առարկան՝ բնկոյղէ յղկուած քառակուսի խոշոր տախտակ մըն էր, քանդակւած սիրուն պատկերով մը:

Ողնւորուեցայ, կարծեցի թէ ինս նս էֆէն-

տին իր ժամանակը կ'ընէ գեղարուեստական աչ-
խատու թիւններով: Քանդակը՝ որքան գեղեցիկ
և աչքառու, նոյնքան ալ աչքառու էր Ինսան
էֆէնտիի եռանգը և փութկոտութիւնը: Օրինա-
կելի կորովով ժը քանդակը միշտ կը փորէր:

Երբ իրեն քով նստայ, բաւական արտայայ-
տիչ սպիտ մը ունեցաւ և ըսաւ թէ, «պատկերը
կարէ, աչքերը, գէ՛մքը կը փորէ, զիմագիծը ան-
յայտագնեկու հոմար»:

Անաֆարթաի կողմերը թուրք զինուորնե-
րը փլցուցած էին Թաֆուրի յոյն եկեղեցին: Ե-
կեղեցիի կ'ս' կարասի և աստղաձեւերէն, ընկոյզի
վրայ քանդակուած Աստուածածնայ պատկեր
մըն ալ բաժին ինկած է անասնարոյժին: Ինսան
էֆէնտին՝ խղճամիտ աղայ, իր կարելին կ'ընէր
գեղեցիկ կոյսին զիմագիծը խաթարելու համար.
որովհետեւ աւելցուց որ. «այդ տախտակէ անուակ
չինել պիտի տար, և վրան պատկեր ունենալը
լաւ չէր. .

Խորունկ մտածումի մը սէջ թողուած ամ-
բողջ ժամ մը զիտեցի Ինսան էֆէնտիին բուժ
դասնակը, որ հետզհետէ կերպարանափոխ կ'ընէր,
Աստուածային կոյսը:

Վարկեան մը եղաւ — երբ աչքերը կը փո-
րէր — կոյսին հեծ, անոյշ զիմագիծը, այնպիսի
չիլ ու վիրաւոր արտայայտութիւն մը առաւ,
որ խկապէս արդահատելի էր:

Կոյր Աստուածամայր, ըսէ Զաւկիդ, որ
գիշ մը նոյսի մեզի, եթէ ոչ վաղը, իր աչքն ալ
պիտի փորեն:

21 Հոկտ. 1915 SOF. U. ՍՍԼԻԻ
Տարտանէլ — Սէտտիլ պահր

ՄԱՍԻՍ ՓՈՐՉԱՆՔ

Երբ վերջին անգամ Պոլսէն կ'ելլէր դրի
դէպի արտասահման, ոչ ասպետական քաջութեամբ
մը, Թէեւ ինէ ետքը Ասպետի օտազ ուր իրենց մե-
նաշնորհ լնող պարուններ իմ շախիդիս հետեւեցան
տեսակ մը նուազագու՛մ եւ խղճհարուծիւն
զգացի:

Կարծես ծան մը, մութին մէջ, — աղպիսի
ձայներ միշտ մութին մէջ կը խօսին, ետեւէս կը
պոռար,

— վանտ, վանտ, ո՛ր կը փախչիս այդպէս:

Զայնը այնպի յամառօլէն կը պոռար որ
պարտք զգացի բացատրութիւն մը տալ:

— Կը փախչիմ որովհետեւ կը վախնամ որ
գիս նորէն կը ձերբակալեն եւ աշտորի ու տա-
բազրութեան անասնելի համբաւն ձեռք կ'առնեն:

— Իսկ անոնք որ Պոլիս կը մնան միմե՛ նոյն
հաւանականութեան ենթակայ չեն, գոչեց ձայնը,
միշտ մութին մէջէն:

— Թերեւս. սրտասխանեցի դողամար ձայ-
նով մը. բայց ես ուրիշ պատճառներ ալ ունիմ
Պոլսէն հեռանալու:

— Իրո՞նք են այդ պատճառները, գոռաց
ձայնը խաւարին մէջէն:

— Ո՛վ խաւարին մէջէն հնչող ձայն. շատ
բազմաթիւ են այդ պատճառները:

— Այնքէն կարեւորը բտ՛ գոնէ

— Կ'ուզես որ ամէնէն կարեւորը եւ ամենէն
ոարսափելի ըսեմ... Պարէն կը փախչիմ պարզա-
պէս ազատեալ համար Տորոսոյց շինողներուն
ձեռքէն, որոնք վից ամիս առաջ ինէ ձեռագիր
կ'ուզեն իրենց տարեցոյցներուն համար ու
առտուրնէ մինչեւ իրիկուն գլխէս չին հեռանար

մինչև որ իրենց ձեռագիրը ձեռք չձգեն... եւ ասոնց մէջ ամենէն սարսափելին է թէտղիկը:

— Ես թէտղիկէն ստրտափելին ու Գաուստէն աւելի սոսկալի մէկը պիտի համեմ դէմդ չ'ուրբէջի մէջ, շարունակեց մուծէն խօսող ձայնը եւ լռեց:

Կարծեցի որ կատուկ կ'ընէր, որովհետեւ այն ատեն տակաւին չէի ճանչնար մեր պատուական բարեկամը Գոտուրեան վարդապետը:

Եւ անու օր մը մը շուր Արշալոյստի խմբազրատան մէջ ճանօթացանք իրարու:

Քանի մը խօսք փոխանակելէ ետքը, ըսաւ.

— Չունէ բան մը պիտի խնդրեմ...

— Հրաման րբէ՞ք:

— Տարեցոյց մը պատրաստելու վրայ եմ ու կ'ուզեմ որ բան մը գրես...

— Բայց վարդապետ...

— Կը խնդրեմ, մերժում չեմ ընդունիր եւ ամէն տեղ պիտի հալածեմ ձեզ մինչև որ ձեռագիրը ձեռք ձգեմ:

Այն ատեն յիշեցի մուծին մէջէն խօսող խորհրդաւոր ձայնը:

Իւ արդարեւ. Գոտուրեան վարդապետ լաւագոյն դատի մը արժանի յամառութեամբ, զիս հալածեց ճաշարանէ ճաշարան, գինեոսնէ գինեոսն եւ մինչև իսկ ննջատեսնակս մինչեւ որ այս ձեռագիրը ձեռք ձգեց եւ ես ալ օձիբս տգատեցի գոնէ մէկ տարուան համար:

Այսպէս ուրեմն, կարելի է փեմալական թուրքերուն հալածանքներէն ազատիլ, բայց կարելի չէ աշատիլ տարեցոյց շինողներուն ձեռքէր:

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ



ԿԻՍ ԲՈՒՄՍՈՐԻ ԽՈՍՍԱՐՈՒԹԻՒՆԵՐ

ԱՄԻՈՆՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ
ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՅ յԸ

// արդկային ցեղին յարատեւման սահրաժեշտ հիմք կազ ող ամուսնութիւնը՝ լի է այլազան կարեւոր եւրցեր վ, որոնց մէ ամենագլխաւորը դժբաղդաբար մեզմէ շատերու կողմէ անտեսուած ըլլալով կարծէ լուսարանել:

արդկային մարմինը երբ իր կատարեալ զարգացումի շրջանին կը մտանայ, այսինքն, երբ մարդը արթունքի հասած ըլլալով այինը կ'եռայ կրակներուն մէջ, իր աչքերը սովորականէն աւելի կը փայ ին եւ դէմքը նագելի գեղեցկութիւն մը կ'առնու, ահա իրերի այս բնականին բարեշրջման հետ զուգաց, այդ ետրտասարդ սիրայ անծանօթ մի զգացումէ մղուած՝ կսկի տրօփել Այդ օրէն արդէն այդ զգայան սիրաը իր մէջ ունի կեանքի ան անուէր ուժը՝ որ կը կօչենք սէր, որ ռահվիրան է ամուսնութեան, Ահա՛ այդ օրերէն սկսեալ երիտասարդ սերունդը սիրոփն այլազան խնդիրներով մտազբաղուած՝ կը մաշուի եւ կրակուած սրտով իրեն ապագայ սրտակից բնկեր մը կը փնտռէ:

Այդէն զաւակ ունեցող ճնողքի վրայ կը ճանրանայ մի մօծ պարտախանութիւն, այդ է կատարեալ ուշադրութիւն գարձներով հետեւի իրենց երիտասարդ զաւկին բոլոր շարժումներուն եւ ջանսլ խորհուրդ տալ անոնց մերկայնելով միտոյ եւ ամուսնութեան բոլոր զաղտնիքները, որպէսզի անոնք գիտակցաբար կարենան ընտրել իրենց ապագայ սրտակից ընկերը ու այսպէսով կազմել ապագայ տիպար ընտանիք մը:

Անշուշտ կըջանիկ ամուսնութեան մը հիմք

կազմել ուզող երիտասարդը, պէտք է նախ իր ցեղին եւ կրօնին պատկանող եւ միեւնոյն աւանդութիւններով զարգացած ապագայ ընկեր մը փնտռէ իրեն, որ զէսզի կարեսայ միասին անխռով օրէն ամբողջացնել մարդկութիւնը՝ գոհ եւ երջանիկ:

Անդրադառնալով մեր բուն իսկ նիւթին, ամուսնութեան մէջ ամենամեծական հարցը պէտք է ըլլայ ապագայ ընտանիքը կազմող երկու սեռի ներկայ սցուցիչներուն մարմնային առողջապահութիւնը: Պէտք չեն ամուսնանալ անոնք՝ որոնք զանազան տարափոխիկ հիւանդութեանց մատուցած կը ստապան:

Օրինակ = Թ.Ռ.Ֆ.Ա.ԽՏԸ, այդ ահուելի օտերներ գործող հիւանդութեան ենթակայ մէկը, պէտք է հեռանայ ամուսնանալու գաղափարէն: Ինչու եւ այսպէսով ան արդէն կատարած Կ'ըլլայ մարդկութեան ամենամեծ բարիք մը: Նոյնպէս առնենք ՖՐԱՆԿԱՅԻՏԸ եւ բոլոր վեներական ախտերը, որոնք երիտասարդաց անողք թշնամիներն ըլլալով՝ ներկայ սերունդին մէջ սոսկալի արագութեամբ կը ծաւալին եւ հազարաւոր երիտասարդներ օրէ օր զէպի անդունդը կառաջնորդեն:

Ի խօսքով բազմատեսակ են այն հիւանդութիւնները՝ որոնք երիտասարդ ամուսնու տուները միայն Կը բանդեն:

Ամուսնութեան ապագայ այս բոլոր խոչընդոտներուն առաջը առնելու միակ դարմանն է *ամուսնութեան կոչող երկու սեռերը բժշ, լուրջ ֆենուրեկէ մը սնցնել* եւ ապա արտօսել անոնց ամուսնութիւնը:

Ահա՛ այսպէսով միայն ծնողք մը իր գաւկին հանդէպ իր նուիրական պարտականութիւններէն ամենախարեւորը կատարած Կըլինի: (Գեղազործ)

Ն. ՏԷՐ ԿՐՃԻԿԵԱՆ

ԵՐԿՈՒ ԱՆԲԱԺԱՆ ՄՐՏԵՐ

(ՊԱՏԿԵՐ ՄԸ)

Ռոտտմայի մէջ շաբաթ իրիկուն մը, Ռուբէն աղայի օլկինը կանթեղը վառեց սովորականէն օտելի վեր առաւ անոր լոյսը, երկու մով՝ ալ վառեց պատէն կախուած Ս Սատուածածնայ պատկերին՝ ուղջեւ եւ Արշալոյսը բանի մը կտոր խունկ նետեց խնկամանին բարկ կրակին վրայ եւ Պողոսիկին ու Էֆթիկին ետեւէ—որոնք մէկ մէկ մով բռնած էին—աննեակէ սննեակ տաբաւ ծխացող խունկը:

Հայրիկը *ԵԿԵՍՅԷՆ* կը մըմնջէր: Սննեակները սրբագործուեցան:

Պատերը խնկոտեցան, ինչպէս ամէն կիրաւուտքին, բայց այ՛ն անգամ Արշալոյսը բարախուն սրտով եւ մեծ հաւատքով մը կը տանէր խնկամանը նաեկացիին աղօթքով՝ ապահով դեւերը հալածեցան, խաւարը փշրուեցաւ, ոչ ոք պիտի գայ իրենց ընտանեկան խաղաղ կեանքը խանգարելու, ինչպէս այդ օրերը շատ մը հայերու սուներուն մէջ:

— Հայրիկ քեզ պիտի չաքտորէն չէ՞. — հարցուց Պողոսիկ—մեր ամէն կիրաւուտքին աղօթեցինք Սատուած հայրիկին:

— Ձէ, զիս չեն տանիր տղաս, ես ծեր եմ արդէն, եւ Սատուած հայրիկը ձեր աղօթքները միշտ կը լսէ:

— Հասկա կարապետ աղան ինչու տարին, ան ալ քեզի պէս Թաղական էր, ան ալ ամէն կիրակի ժամ կ'երթար ու կ'աղօթէր. հարցուց Արշալոյս Թերահաւատի շեշտով:

— Սո՛ւս աղջիկս....

« Դըք. դըք».

Դրան ախը սովորականէն օտելի ու ժգնու-

Թեանք զարկին.

Սրակը դող ելան. Մայրիկը Ս Աստուածածնայ պատկերին դարձած խաչակնքեց:

Այդ իրիկուներ երկու ուսիկաններ *Ռուբէն* աղան տարին ու շրժայակապ աքսորեցին քաղաքին երեւելիներուն հետ:

Երկու յաբան՝ ետք *Ռոտոսմոյի* հայերն ալ դէպի հսկիշէ հիր աքսորուեցան, հոն թողով իրենց տունը եւ ստացուածքը հողին տակ պահելով: Աստուածնայ պատկերը, խնկամանը, խունկը:

Աքսովայրին մէջ հարուստն ու աղքատը զանազանել կարելի չէր. Մետաքսեայ զգեստ հագնողները շուտով մերկացան ու մարմիններն խանձեցին տաք արեւուն տակ: Աղքատներ՝ աւելե ճարպիկ գտնուելով՝ այդ տառապանքի ճամբուն վրայ համամատաբար աւելի բարեկեցիկ ապրեցան.

Ռուբէն աղայի բնտանիքը շատ շուտով սպառեց իր ունեցած դրահը: Անօթութիւնը ստիպեց Աքսովայն ու էֆթիկը շատ հեռուները երթալ սափորով ջուր բերել, վաճառել հացի դրամ հանելու համար:

Օր մը սակայն Առշալէյս հիւանդացաւ եւ շաբան մը ետք հողին յանձնուեցաւ ինչպէս բիւրաւորները: Էֆթիկ վախցաւ միայնակ ջուր երթալ: Մայրը իր վերջին շապիկը ծախեց չոր հացին համար:

Դրացիները, որոնք կը ճանչնային այս բարեկեցիկ բնտանիքը, եւ որոնք ականատես կ'ըլլային ասոնց տխուր կեանքին՝ կ'ըմբռնէին այս բնտանիքին տխուր վիճակին սաստկութիւնը. — «Օրեր տեսել ու այս օրերը Լն հասնիք»:

Էֆթիկենց վրանին մօտ Երզնկացի բնտանիք մը կար: Հոն հայր չկար, մայրը տառապած մէկն էր. չէիք կրնար ըսել որ ասոնք լաւ օրեր տեսած

են: Այս բնտանիքին մեծ աղջիկը Մաննիկ, 10 տարեկան, օրն ի բուն կ'աշխատէր. հեռուներէն ջուր կը բերէր պատառ մը հացին համար:

Մաննիկ սիրեց էֆթիկը, ամէն օր միասին էին: Շատ անգամ մօրմէն ծածուկ՝ իր մէկ պատառ հացը աղքատի վեհանձնութեամբ էֆթիկին կուտար:

Այս երկու պզտիկ աղջիկները՝ մինչեւ զինադադարը միասին էին, միասին լացիս, միասին անօթի մնացին, միասին խնդացին:

Չինադադարը սակայն սուրի մը պէս բաժնեց երկու սրտերը: Էֆթիկը *Ռոտոսմոյ* մեկնեցաւ եւ Մաննիկ Պուրթէ յոր պատերազմէն առաջ հաստատուած էր հայրը:

1920ի աշնան, Պուրթէի ազգ վարժարանը բացուեցաւ: Ցանցառ Թաղերէն մէկ մէկ աշակերտներ եկան խմբուելու այդ կրթական հաստատութեան մէջ:

Մաննիկն ալ դպրոց գրկուեցաւ: Ուշիմ աղջիկ մըն էր, ամենէն յառաջադէմը երրորդ դասարանին մէջ: Ստեպ կը յիշէր իր աքսորային կեանքը, բայց երբեք չմասնեց իր ցաւը որ ունեցած էր իր անբաժան ընկերուհիին բաժանումին առթիւ:

Կիրակի մը *Ռոտոսմոյի Ռուբէն* աղան եկաւ յայտարարելու Թէ դպրոցի համար երկու զաւակ ունի. վճարեց երեք ամսականները,

Յաջորդ օրը շատ կանուխ եկած էր *Ռուբէն* աղայի աղջիկը: Շատ լաւ հագուած. — Հարուստ է ըսին իրեն նայող միւսերը:

Համառօտ ընտրութենէ ետք երրորդ դասարանը դրինք զինք, ուսկից այդ առտուն կը բացակայէր Մաննիկ:

Էֆթիկ խորասուզուած գրքին վրայ սկսաւ դասերը պատրաստել. քիչ մը ետք Մաննիկ ներս

մտաւ իր համեատ հազուստով. հայրը նոր մեռած էր ու մայրը՝ անծուկ վիճակի մէջ մ'նացած:

«Էֆթիկ»ը դասի հաննցի:

Մանիկ այդ նոր անունը լսելով՝ ցնցուեցաւ, փայ մը մտաւ աչքերուն մէջ՝ ու մեծ աչքերով ն պէտքաւ նորեկ ընկերու հին:

— «Էֆթիկ» մրմնջեց Մանիկ տարակուսանքով մը

Էֆթիկ շատ ընտկանօրէն այդ ծանօթ ձայնին դաժնուց գլուխը՝ որ բովիկն էր:

— «Մանիկ» — բացագոնչեց ան նոյն պէս անվտանգօրէն. բայց շատ քիչ ետք զյգ գոյգ բազուկներ բացուեցան օդին մէջ, իրարու երկարեցան. երկու սիրտեր զիրար գրկեցին. նոր զգեստով ու հին զգեստով երկու աղջիկներ հրարու պլուեցան առանց խօսքի, առանց ձայնի. ու մենք լեցուած աչքերով տեսանք միայն որ արցունքներ կ'իյնային չորս աչքերէ:

Ոյդ ժամուն ես չկրցայ դասաւանդութիւնը շարունակել:

Երկու անբաժան սրտերը կրկնեցին մեզի իրենց պա մութիւնը:

— Հայր Սուրբ, — վերջացուց Էֆթիկ, Մանիկը աքսորիս մէջ մեզի հաց կուտար: Հիմակ հայրիկս հոս է հոտրուստ է. զինքը մեր տունը պիտի տանիմ մայրիկս ու մոնք զինքը պիտի ռիրենք Արշալոյս քայրիկիս պէս:

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ՀԱՅ ԳԱՂՈՒԹՅԱՆ ՄԵԾՆ ՌՈՒՄԱՆԵՌՈՅ ՄԷՋ



Մեծն Ռուժանիան՝ այն հիւրընկալ երկիրն է, որ շատ տարիներ առաջ ապաստարանը եղած է հայածուած գաղթական հայ ազգին:

Ձեռագրիներու յիշխատակարանները, որոնք կը գտնուին Վիեննայի եւ Վենետիկի մատենադարաններուն մէջ՝ կը վկայեն ասոր:

Մինաս Թօթաթեցի միջնադարեան քերթողը իր նշանաւոր «Հերիսայ»ի օտանաւորը Ռուժանական հողին վրայ գրած է ժ.Ձ. դարու վերջերը՝ հայրենիքի կարօտով տոչորուած:

Մեր նպատակը չէ մանրակրկիտ պատմական ընկ այդ անցեալին, այլ հարեանցի ակնարկ մը տալ այս հայ գաղութին վրայ որ համայնարհայն պատերազմէն ետք նոր փուլի մը մէջ մտաւ:

Երբ Ռուժանիան զրուեց Պետրապոլիս, Իրանսիվանիան, Պուքովինան եւ Տօպրուհան, եւ շատ բնականօրէն ուղեւորուեցաւ, հունգարահպատակ, Աւստրիոյ եւ Պուլիարիոյ Հայեր եկան խմբուելու Մեծն Ռուժանիոյ սահմաններէն ներս:


Այսօր, այս սահմաններուն մէջ՝ մօտաւորապէս 50,000 հայութիւն մը կը համրուի, որոնց մէկ մասը Ռուժանահպատակներ են:

Մեծն Ռուժանիոյ ն. վ. թօղաւորը Ֆէրիսնանտ եւ ն. վ. թաղուհին Մարիա 1922ին, հոկ. 15ին Իրանսիվանիոյ պատմական Ալպա Եուլիա քաղաքին մէջ հանդիսաւորապէս արքայական թագերն առին եւ Ռուժանիոյ հայ գաղութը իր ներկայացուցիչներով մասնակցեցաւ հանդիսաւորութեանց իր երախտագիտական զգացումները դնելով յոսս արքայական ամօրին:

Արքայական Թագադրուքիչև
Շնորհաւորող
Հայ Պատգամաւորուքիչևը



Ն. Վ. ՖԵՐՏԻՆՆՏ ԹԳ .և. ՄԱՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՆ



Յուսիկ Ս. Վ. Զօհրապեան. Յ. Բ սրակեան.
Մէլիսոն, Ս. ԳԵՔԵՆԱՆ, Միհայէլէսըս.

Հ. Հ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՈՒԹԻՒՆԸ

Համաշխարհային պատերազմը հազիւ վերջացած՝ Ռուսաստանի հայ գաղութը շինարարական ետք երբ սկսուել իր մայր երկրին խաղրկիկներ քնդունիլ՝ այդ օրէն Ռուս նահանջն այ իր սիրտը հայրենիքի սրտին կապնց, և ինքն այ թէև հետուները գաղթած՝ հետու էր նախանձելի վիճակ մ'ունենայէ, բայց այնու հանդերձ իր մէկ պատառ հացը չ'մոռցաւ կիտել անկիւն մը ինկած հայ որբի մը հետ :

Ռուսմանահայ Միութիւնը որ կազմուեցաւ 1918ի վերջերը դերն ունէր կամուրջն բլլալու մայր հայրենիքին եւ գաղութին միջեւ : Ռուսմանահայ Միութիւնը մեծապէս օգտակար եղաւ գաղութին, իր կեդրոնավայրն էր Պուքէշ :

1922 Յունվար 1ին միայն պաշտօնապէս ծածանեցաւ հայ Յոագոյնը և այդ օրէն ունեցանք Հ. Հ. Ընդհ. Հիւպատոսը յանձին Տիար Յարութիւն Խնդիրեանի որ նախագէս երկու տարի Ռուսմանահայ Միութեան կեդր. վարչութեան նախագահն եղած էր : Ընդհ. Հիւպատոսութեան պաշտօնական խորհրդականն է Տ. Գրիգոր Զախուչեան ծանօթ հրատարակագիր : Իսկ գրասենեակի գլխաւոր պաշտօնեան է Պ. Արամ Վտաքանգի յայտնի բանաստեղծ :

ԱՌԱՋԱՌՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Պետարապետ մայրաքաղաքը Քիշնէվ՝ եպիսկոպոսանիստ էր, էջմիածնայ Ս. Կաթողիկոսի ուղղակի իշխանութեան ներքեւ : Պետարապետ

կցուեով ամբողջ Ռուսաստանի գաղութը հարեւորապէս պիտի հպատակէր Քիշնէվի առաջնորդին :

1921ին Ռուսմանիա հասաւ Ս. Կաթողիկոսի կոնդակով Մեծն Ռուսաստանի նորնոր առաջնորդը Յուսիկ Մ. Վ. Զօհրապեան միարան Ս. էջմիածնայ վանքին եւ 1922ին աւագը, ներկայացաւ Ն. Վ. Թագուսիին՝ զինքը ներկայացնող կաթողիկոսական կոնդակը յանձնելով Ն. Վեհափառութեան : Սեպտի մէջ՝ պաշտօնապէս ճանչցուած առաջնորդը թեմական ժողով մը գումարեց Պուքէշի մէջ թեմի վարչական տնտեսական եւ ուսումնարանական խնդիրները կարգադրելու համար : Պատգամաւորական ժողովը գնահատելով առաջնորդին գործուելութիւնը խնդրալիք մը խմբագրեց խնդրելով Ս. Կաթողիկոսէն եպիսկոպոսական Ս. աստիճանը տալ Յուսիկ Մ. վարդապետին :

Առաջնորդը փոխն ի փոխ կը նստի Քիշնէվ և Պուքէշ, Քիշնէվի հասցէ է Consistoria armeană str Bulgarilor Chişinău. Պուքէշի հասցէն է Bul. Carol 27. Առաջնորդին փոխանորդն է Արթ. Տ. Գրիգոր Լազարեան, հասցէն է Biserica Armenească, Băcau.

ՌՈՒՄԱՆԻՈՅ ԹԵՄԸ

ԱՄԲՈՂՁ ՌՈՒՄԱՆԻՈՅ ՄԷՋ ՈՒՆԻ
23 ԵԿԵՂԵՑԻ, 25 ԲԱԶԱՆԱՅ

Կաթողիկէ Հայերը որոնք Դրանսիկանիոյ մէջ կը գտնուին՝ 4 եկեղեցի միայն ունին 6-7 քահանաներով որոնք կատին եպիսկոպոսի իշխանութեան ներքեւ են :

Հին Ռուսաստանի մէջ սակաւութիւ են հայ կաթողիկէ եւ հայ բողոքական հայերը, ոչ եկեղեցի եւ ոչ ժողովարան ունին :



Յօ սիկ Ե Վ. Զօհրապեան
Առաջնորդ Մեծն Ռումանիոյ Հայոց



Գ. ՄԱՆԻՍԱԿԵԱՆ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

